

**«Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը սեպտեմբերի 1-ի՝
Գիտելիքի, գրի և դպրության օրվա առիթով**

Սիրելի՛ աշակերտներ, ուսուցիչներ և ծնողներ,

Հարգելի՛ ուսանողներ և դասախոսներ,

Շնորհավորում եմ ձեզ Գիտելիքի, գրի և դպրության օրվա ու ուսումնական տարվա մեկնարկի առիթով: Սեպտեմբերի 1-ի խորհուրդը ազգովի ուխտագնացություն է դեպի մեր գիտակրթական արժեքներն ու արմատները: Դեպի լույսի ու գիտելիքի աղբյուրը տանող ճանապարհի նորովի ընկալմամբ էլ սկսելու ենք այս խորհրդավոր օրը:

Սյունիքի մարզը հարուստ է կրթության ազգային ավանդույթներով, և այս հնագույն լեռնաշխարհում են բացվել առաջին մեսրոպյան դպրոցներն ու վարդապետարանները: Մեր պապերն իրենց գոյության հերոսական պայքարում մաքառել են զենքով ու գիտելիքով՝ մշտապես բարձր գնահատելով գիտուն դպիրներին ու շնորհաշատ աշակերտներին: Պատմության բոլոր մարտահրավերները սյունեցին հաղթահարել է ոչ միայն զենքով, այլև գիտելիքի ու հոգու արիությամբ:

Սիրելի՛ դպրոցականներ, ուսանողներ, մաղթում եմ ձեզ բարձր առաջադիմություն և կամք՝ հաղթահարելու գիտելիքի անսահման աշխարհը նվաճելու դժվարությունները:

Հատկապես շնորհավորում եմ Սյունիքի բոլոր այն մանուկներին, ովքեր առաջին անգամ են ոտք դնում դպրոց: Մեծարանքի ու հարգանքի արժանի մեր մանկավարժներին, ում վստահվում է սերունդների կրթության ու դաստիարակության դժվարին գործը, հաջողություններ եմ մաղթում իրենց շնորհակալ ու հայրենանվեր աշխատանքում:

Այսօր, արագ փոփոխվող ու զարգացող աշխարհում, գիտելիքն ու կրթությունը ամենաթանկ արժեքներն են, մարդկային առաջընթացի ամենակարևոր նախապայմանները:

Անկախ պետականության մեր օրերում էլ սյունեցին գիտության և կրթության ասպարեզներում ունի իր ծանրակշիռ տեղն ու դերը:

Շնորհավորելով Սյունիքի դպրոցականներին, ուսանողներին, մանկավարժներին և ծնողներին նոր ուսումնական տարվա մեկնարկի ու գիտելիքի օրվա կապակցությամբ՝ մաղթում եմ բարձր առաջադիմություն ու գիտակրթական ձեռքբերումներ:

«Սյունիքի մարզպետ



Ս. Խաչատրյան

2015թ.